



«ԵՐԵՎԱՆԻ ՄԻՒԻԹԱՐ ՀԵՐԱՅՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ



Հայաստան, 0025, Երևան, Կոռյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, [ssu@ysmu.am](mailto:ssu@ysmu.am)

«ԵՐԵՎԱՆԻ ՄԻՒԻԹԱՐ ՀԵՐԱՅՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-Ի ԹԻՎ 3 ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 55-րդ կետը՝ «Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի գիտական խորհուրդը, լսելով գիտության գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Կ.Բ. Ենկոյանի «ԵՊԲՀ գիտության զարգացման հայեցակարգ 2018 – 2028/38» թեմայով զեկուցումը,

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) վիրաբուժության թիվ 3 ամբիոնն անվանակոչել գիտության վաստակավոր գործիչ, բ.գ.դ., պրոֆ. Հ.Վ.Սարուխանյանի անվամբ և առաջարկել մշակել հիմնադրամի կառուցվածքային միավորների անվանակոչման կարգի նախագիծ՝ սահմանված կարգով հաստատման ներկայացնելու համար (18-03-03-01):
2. Հավանություն տալ «ԵՊԲՀ գիտության զարգացման հայեցակարգ 2018–2028/38թթ» նախագծին (18-03-03-02):
3. Հանձնարարել պրոռեկտոր, պրոֆեսոր Կ.Բ. Ենկոյանին.
  - 1) մինչև 2018 թվականի նոյեմբերի 1-ը մշակել և ներկայացնել համալսարանի գիտահետազոտական գործունեությունը համաչափ զարգացնելու ծրագրի, գործողությունների պլանի և ժամանակացույցի նախագիծ (18-03-03-03),
  - 2) մինչև 2019 թվականի մարտի 1-ը ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Լ.Ռ. Ավետիսյանի հետ համատեղ մշակել և ներկայացնել կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ներառման և դրա դինամիկ զարգացումն ապահովող ծրագրերի նախագծեր (18-03-03-04),
  - 3) մինչև 2018 դեկտեմբերի 1-ը կլինիկական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Ա.Մ. Մինասյանի հետ համատեղ մշակել և ներկայացնել համալսարանի կլինիկական բազաներում հետազոտական աշխատանքներն ակտիվացնելու և գիտական գործունեությունը զարգացնելու ծրագրերի նախագծեր (18-03-03-05),
  - 4) մինչև 2018 թվականի հոկտեմբերի 1-ը միջազգային գործունեության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, դոցենտ Ե.Ս. Սահակյանի հետ համատեղ մշակել և ներկայացնել համալսարանի միջազգային վարկանիշի բարելավմանն ուղղված միջոցառումների նախագծեր (18-03-03-06):
4. Որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԻՏ.ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Բ.Գ.Դ., ՊՐՈՖ. Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բ.Գ.Դ., ՊՐՈՖ. Տ. Գ. ԱՎԱԿՅԱՆ